



Ա. ՇԱԻԿ



ՊԱՐՈՂ

ԿՐՑԱՆԵՐԸ



894.3 Ե  
-----  
Ը-13

ԱԶՐՆԵԹՐ  
1 9 3 6

894.35

011-071

Ե-13

Ա. ՇԱԻԿ

# ՊԱՐՈՂ ԿՐՅԱՆԵՐԸ

Թարգմանեց Ա. ԱՐՆԱՆ



Ա. Զ. ԵՐՆԵՐ  
Ուսումնա-մանկավարժական բաժին  
Բագու 1936 թ.

Խմբագրից Թ. ՀՈՒՐՅԱՆ  
Տեխ. խմբ. պիւր ԱՐՊԱՆՅԱՆ



59131-66

## ՊԱՐՈՂ ԿՐՅԱՆԵՐԸ

Քաղաքի մեծ տներին մեկուժ, ապրում էին չորս-հինգ դպրոցականներ: Նրանք ամեն ուր դպրոցին վերադառնալուց հետո հավաքվում էին բակի լայն, լուսավոր ու հովասուն մասում տեսակ-տեսակ խաղեր սարքում, վազվզում, յերգում և ուրախ զրույց էին անում:

Յերբ հոգնում էին, հավաքվում էին փոքրիկ պարտիզակում, նստում յերկար աթոռների վրա և սկսում հեքյաթներ պատմել: Մի ուր դարձյալ հավաքվել էին բակում ու նոր էին սկսել խաղը, յերբ տեսան, վոր հեռվից Ասլանը ձեռքին մի գնդակ, խաղ անելով գալիս է: Յերեխաները վազեցին, շրջապատեցին Ասլանին և ուրախ-ուրախ հարցրին.

- Ասլան այդ գնդակը վո՞ր տեղից ես գնել:
- Տո՛ւր միասին խաղանք.— ասաց նրանցից մեկը:
- Յեկեք “փախցրու գնդակը” խաղանք բացականչեց մի ուրիշը:

— Կորեք, վոչվորի չեմ տալու, յես մենակ եմ խաղալու,— պատասխանեց Ասլանը:

Յերեխաները տրտում-տխուր ասացին.

- Ասլան ինչ կլինի, թո՞ղ մենք ել խաղանք:
- Բոլորս միասին խաղանք, բոլորս միասին.— ասաց Կորգմազը:

Ասլանը նորից գոռաց.

- Կորեք, յես մենակ եմ խաղալու:

Յերեխաները տրտում-տխուր դիտում էին Ասլանի խաղին, Թեյմուրը մոտեցավ ու հարցրեց.

- Ասլան այդ գնդակը վո՞րտեղից ես գնել:

— Չեմ գնել,— պատասխան էլ Ասլանը,— այլ դպրոցից վերադառնալիս մի յերեխայի ձեռքից փախցրել եմ: Կանբայր զարմացած հարցրեց.



— Մի յերեխայի ձեռքից էս փախցրել, դու մոռացել էս, վոր դպրոցում ուսուցիչը ասել է, «գպրոցականը գողութիւն չպետք է անի»:

Ասլանը ձեռքում գնդակը խաղացնելով ասաց.

— Յես չեմ գողացել, այլ ձեռքիցը խլել ու փախել եմ:

— Դա յել գողութիւն է:

— Չէ, սխալ ես. գողութիւն չէ:


— Իհարկէ գողութիւն է. ընկերոջ խաղալիքը փախցրնելը նույնպէս գողութիւն է:

Խեղճ յերեխան հիմի լաց է լինում,—ասաց մեկը:

— Մնողներն ել նրա վրա բարկանալու յեն ու մի լավ ծեծելու.—ասաց մի ուրիշը:

— Իմ ինչ գործն է թող ծեծեն,—պատասխանեց Ասլանը և սկսեց գնդակը դեպի յերկինք գցել:

Թեյմուրը մի հարված հասցրեց Ասլանի ձեռքին զրնգակը խլեց ու փախավ: Յերեխաները բոլորը վազեցին նրա յետեից և սկսեցին գնդակը իրար գցել: Ամենից ա-



ռաջ գնդակը հասավ Սառայի ձեռքը, Ասլանը վազեց դեպի Սառան, վոր գնդակը խլի, Սառան տեսավ, վոր ինքը նրանից չի կարող պաշտպանվել գնդակը շարտեց հեռվում կանգնած ընկերներին: Այս անգամ գնդակը հասավ Կանբային:

Հենց վոր Ասլանը Կանբայի մոտ հասավ, Կանբայը գնդակը գցեց Սառայի կողմը: Ասլանը վազեց դեպի Սառան: Թեյմուրը մի քիչ մոտենալով կանչեց.

— Սառա, Սառա, այս կողմը գցիր:

Սառան գնդակը գցեց Թեյմուրի կողմը: Կանբայը ձայն տվեց:

— Թեյմուր դու յել ինձ գցիր, Հենց, վոր Ասլանը Թեյմուրին մոտեցավ, Թեյմուրը գնդակը գցեց Կանբայի կողմը: Ասլանը ինչքան վազվեց, ինչքան շարժարվեց գնդակը բռնել չկարողացավ, ի վերջո բարկացավ ու անվայել խոսքերով ընկերներին հայնոյեց:

Ասլանի հայնոյանքը բոլորովին դուր չեկավ Կանբային, նա գնդակը գցեց Ասլանի կողմը և ասաց.

— Փակիր բերանդ անամթ գող, այնտեղից վատ հոտ է գալիս:

Ասլանը անմիջապէս վերցրեց գնդակն ու պատասխանեց.

— Գողը, դու յես:

— Յեթե յես գող լինելի քեզ նման, յերեխայի ձեռքից գնդակ կթուցնելի. — ասաց Կանբայը:

— Յես չեմ գողացել, փախցրել եմ, շնորք ունե՞ս, դու յիլ փախցրու:

— Յես վոչ վոքից գնդակ չեմ փախցնի: Հիշում ես անցյալ տարի յել Սամադի սև կազմով տետրակն եյիր գողացել:

Թեյմուրը քան, քան խնդաց ու ասաց.

— Հա, հիշում եմ, հիշում եմ. ուսուցիչը դրան ուզում եր դպրոցից վաճառել, բայց դա այնքան աղաչեց, լաց յեղավ, վոր վերջը ուսուցիչը դրան խղճաց:

Կանբայը բարձր ձայնով կանչեց.

— Տղերք, այս կողմը յեկեք, դրա հետ խաղալ չի կարելի, դա գող ե:

Սառան միտցավ Կանբային.

— Ճիշտ ե ասում Կանբայը, յեկեք մենք առանձին խաղանք:

Յերեխաները բոլորը հավաքվեցին Կանբայի շուրջը Թեյմուրն ասաց.

— Տղերք, վաղը հանգստյան որ ե: Յես գնալու յեմ մորաքրոջս տղայի մտա, նա մի մեծ գնդակ ունի...

Սառան նրա խոսքը կտրելով ասաց.

— Ի՞նչ խաղ սարքենք, շուտ արեք, մի խաղի անուն տվեք:

Կանբայը ուրախությունից վեր թռչելով բացականչեց.

— Ճիշտ, վոր վաղը հանգստյան որ ե: Այ ջան-այ ջան, հայրս ինձ գազանանոց ե տանելու: Անցյալ շաբաթ ել կրկես եր տարել: Այնտեղ շներից կազմված յերաժըտախումբ կար: Մեկը քյամանչա յեր ածում, մյուսը պար եր գալիս, մնացածներն ել ծափ եյին տալիս: Վերջը մեջտեղ յեկան ծովաչները: Նրանք իրենց դնչերով գնդակ եյին խաղում: Ես ել ասեմ, մի փիղ մեզ ենքան ծիծաղացրեց վոր...

Սառան. յես ել վաղը թատրոն եմ գնալու:

Թեյմուրը. յես ել գրադարանից նոր գրքեր եմ վերցնելու ու կարդալու յեմ: Սովարաթղթից մեքենաներ ել ինքնաթիռներ եմ պատրաստելու:

Կանբայը. քո կարգացած գրքերը ի՞նչի յեն պետք: Դու միշտ մեքենաներից ու ինքնաթիռներից ես խոսում: Թեյմուրը ծիծաղելով պատասխանեց.

— Ի հարկե մեքենան, ինքնաթիռը լավ բաներ են, ապա ի՞նչ ե քո ոճը, մողեսը, վողնին, նապաստակը... Գու յել խելքդ տվել ես դրանց, միշտ այնպիսի գրքեր ես կարդում, վորտեղ կենդանիների մասին ե խոսվում:

Սառան ասաց.

— Ինչ անենք Թեյմուր, նա կենդանիներին ե սիրում, գրա համար ել այնպիսի գրքեր ե կարդում, վորտեղ խոսվում ե կենդանիների մասին, դու յել մեքենաներն ես սիրում, այդտեղ ծիծաղելու ի՞նչ կա:

Թեյմուրը հարցրեց.

— Վորն ե լավը:

Սառան պատասխանեց.

— Ով, ի՞նչն ե սիրում, նա յել լավ ե:

Իյուլքարը նստել եր պարտեզում դրված նստարաններից մեկի վրա: Նա միջնակարգ դպրոցի վերջին դասարանի ամենա ընդունակ աշակերտն եր, դրա համար ել նրան ըտրել եյին պիոներ կազմակերպության շեկավար: Յերեխաների խոսակցությունը նրա մեջ խորը մտքեր արթնացրեց: Նա մտածում եր, թե ինչպիսի պատասխանատու խնդիր եր դրված պիոներ ղեկավարի վրա: Նա կանչեց յերեխաներին.

— Յերեխաներ ինձ մոտ յեկեք:

Մի ակնթարթում յերեխաները հավաքվեցին Իյուլքարի շուրջ: Իյուլքարը նրանց ասաց.

— Յերեխաներ, յես այստեղ նստած լսում եյի ձեր խոսակցությունը: Սրանից հետո, հանգստի ե արձակուրդի որերին, յես պետք ե ղեկավարեմ ձեզ, վորպեսզի ձեր կատարած աշխատանքը արդյունավետ լինի:

Յերեխաները ուրախացած թռչկոտում էին նրա շուրջը: Թեյմուրը հարցրեց.

Իյուլքար վաղը հանգստի որ ե մեզ համար ի՞նչ ես բերելու:

Իյուլքարը պատասխանեց.

— Վաղը ֆուտբոլ եմ բերելու, հրապարակում ֆուտբոլ եք խաղալու: Ասլանը մոտեցավ նրանց ու հարցրեց.

— Վաղը ո՞ւր եք գնալու:

Թեյմուրը բարկացած նայեց նրան ու ասաց.

— Դու, վոչ մի տեղ.

— Նրան ել պեաք ե տանենք—ասաց Իյուլքարը:

— Նա մեզ հետ թո՞ղ չխաղա:

— Ի՞նչու:

— Վորովհետև գող ե, մեզ ել գողություն կսովորեցնի: Ասլանը բարկացած ձայնով գոռաց:

— Գողը, դու յես:

Սառան խիստ դեմքով նայեց նրան ու ավելացրեց

— Յեթե գող լիներ, նա յեւ քեզ պես յերեխաների ձեռքից գնդակ կթողներ:

— Դասարանում յերեխաներից տետրակ կգողանար— ավելացրեց Թեյմուրը:

Ասլանը բարկությունից լաց յեղավ, աչքերի արասուները ձեռքով սրբեց ու պատասխանեց.

— Ձեզ ինչ... լավ եմ անում: Ձեր իրերը չեմ գողանում... Սառան պատասխանեց.

— Յեթե կարողանաս, ի հարկե կգողանաս:

Իյուլքարը բարկացավ յերեխաների վրա: Նրանց պատվիրեց, վոր լռեն, վերջը դառնալով Ասլանին ասաց.



— Դու ճանաչում ես այն յերեխային, վորի ձեռքից խլել ես այդ գնդակը:

— Սյո, իրեն ել եմ ճանաչում իրենց տունն ել:

— Վաղը ձեզ համար ֆուտբոլ եմ բերելու: Դու գնա, գնդակը իր տիրոջը տուր ու վերադարձիր, մինչև քո գալը մենք ել հանգստի ու արձակուրդի որերին տանվիք աշխատանքների պլանը կազմենք:

Ասլանը գնաց: Իյուլքարը յերեխաներին հավաքեց իր շուրջը և նրանցից առանձին-առանձին հարցրեց.

— Սառան, ասա տեսնեմ դու հանգստի որերին ի՞նչ ես ցանկանում անել:

— Յես... յես ցանկանում եմ թատրոն գնալ:

— Ել ուրիշ ի՞նչ ես ուզում անել:

— Մեկ ել մանկապարտեզի յերեխաներին զրոսանքի յեմ տանելու:

Իյուլքարը նորից հարցրեց.

— Թեյմուր դու ի՞նչ ես սիրում:

— Յես սիրում եմ մեքենաները, նավերը, այրուղիները և զրանց մասին գրված գրքեր կարգալը:

— Կանքայ, դու ի՞նչ ես սիրում:



— Յես սիրում եմ կենդանիներին, յեթե ամեն որ  
գազանանոց գնամ, կրկես գնամ, դարձյալ չեմ կշտանա:

Սառան ասաց.

— Ճիշտ ե ասում, դպրոցում, յերբ մտնում ե բնա-  
գիտական կարիներ աշխատեցից դորևս գալ չի կարողա-  
նում: Յերկար ժամանակ աչքերը նկարներին հարած  
կանգնում ե:

Թեյմուրը ավելացրեց.

— Բնագիտական դասի ժամանակ, կենդանիները  
բնավորութեան և ապրելակերպի մասին այնքան հարցեր  
ե տալիս, վոր ուսուցիչը շփարում ե:

Իյուլքարը ծոցից մի թերթ թուղթ ու մի մատիտ հանեց  
և ըստ կարգի գրեց. աշխատանքի թանգարանը, մանկա-  
պարտեզը, թատրոնը, գազանանոցը, կրկեսը, գործարան-  
ներն ու ճարտիկները:

Նույն պահին Ասլանը վագելով յեկավ: Մտտեցավ  
Իյուլքարին ու ասաց.

— Գնդակը տարա և յերեխային տվեցի: Շատ ուրա-  
խացավ:

Սառան հարցրեց.

— Յերեխան վորտեղ եր:

— Նստած եր դռան առջև: Յերբ մտտեցա ճանաչեց  
ինձ: Բարկացած նայեց յերեսիս: Գնդակը հանեցի գըր-  
բանիցս ու ասացի: «Այ տղա այս գնդակը քոնն ե»: Նա  
գնդակը ձեռքիցս խլեց ու իմն ե ասելով փախավ բակը:  
Յես ել առանց մի բան ասելու յես դարձա: Յերեխան  
ուրախացած «մայրիկ են տղեն գնդակս բերել ե» ասե-  
լով մտավ տուն:

Իյուլքարը Ասլանին ասաց.

— Կեցցես Ասլան, լավ արեցիր, վոր տարար տվեցիր:  
Սրանից հետո վոչվոքի իրը մի փախցնի: Ընկերներդ  
բոլորին ել հարցրել եմ, հիմի յել դու ասա տեսնեմ ար-  
ձակուրդի որերին ինչով ես գրադվելու, ամենից շատ  
ինչն ես սիրում:

Ասլանը մի քիչ մտածելուց հետո ասաց.

— Յես... յես սիրում եմ գյուղատնտես լինել:

Իյուլքարը իր մոտ գրեց նաև մոտակա կոլտոգներն ու  
ու սովխոգներ եքսկուրսիաներ կատարելը:

Վերջում դառնալով յերեխաներին ասաց.

— Վաղը ֆուտբոլ ենք խաղալու: Կեսուրից հետո ձեզ  
համար մի գիրք եմ կարդալու: Գրքում գրված ե, թե  
ինչպես մի յերեխա նոր ձեռի սավառնակ ե շինել: Առա-  
ջիկա հանգստի որը ձեզ տանելու յեմ աշխատանքի թան-  
գարանը, հաջորդ հանգստի որը գազանանոց ենք գնալու և  
հաջորդաբար թատրոն, կրկես, մանկապարտեզ, վերջն ել  
եքսկուրսիա կկազմակերպենք կոլտոգներն ու սովխոգ-  
ները:

Յերեխաները շատ գոհ մնացին: Առաջին հանգիստի  
որը ուրախ անցավ: Մինչև կեսուր ֆուտբոլ խաղացին:  
Կես ուրից հետո «թղթից նոր սավառնակ» գիրքը կարդա-  
ցին: Յերբ Իյուլքարը կարդում եր գիրքը ու պատմում  
փոքրիկ Մամիչի վարպետութեան մասին բոլորը հիանում  
եյին: Թեյմուրը ամբողջութեամբ լսողութուն եր դար-  
ձրել: Նա մեկ-մեկ ախ քաշելով ասումեր, «յես նրանից ել  
լավ սավառնակ կշինեմ»:

Իյուլքարը ընթերցումը վերջացնելուց հետո նայեց  
Թեյմուրին: Թեյմուրը ախ քաշեց ու ասաց.

— Յեթե Մամիչը այստեղ լիներ միասին սավառնակ  
կը շինեյինք:

Իյուլքարը նրան ժպտաց ու պատասխանեց.

— Այսքան ընկերներդ բավական չեն:

Թեյմուրը սրտաբաց ու կատակասեր յերեխա յեր: Նա  
ձեռքով ընկերներին ցույց տալով ասաց.

— Իմ գործը սրանց հետ չի բռնում: Մեկը խոսում  
ե կաղամբից և սոխից, իսկ մյուսը վոգնուց ու նապաս-  
տակից:

Իյուլքարը պատասխանեց.

— Դրանք բոլորն ել պետքական են: Դրանցից վոչ  
մեկին ել վատ ասել չի կարելի: Պետք ե գործը լավ կա-  
տարել, այ, թե ինչու մն ե բանը:

Այս խոսքերից յերեխաները շատ գոհ մնացին: Այդ յերեկո նրանց քեֆը տեղն էր: Իրենց դասերը լավ պատրաստեցին, մյուս օրը ուսուցչի տված բոլոր հարցերին կանոնավոր պատասխան տվեցին:

Յերեխաները անհամբեր սպասում էին հանգստի օրվան:

Հաջորդ հանգստի օրը գնացին գազանանոց.

Նրանք այնտեղ տեսան շարքով դրված վանդակները վորտեղ պահվում էին գանազան կենդանիներ և թռչուններ: Յերբ թեյվուրը անցնում էր մի վանդակի մոտից, ինչ վոր մեկը իր ձեռքը յերկարեց դեպի նա: Թեյվուրը յետ դարձավ, տեսավ, վոր կապիկն է: Վանդակում մեծ ու փոքր կապիկները խաղում էին: Թեյվուրը կանբային կանչեց.

— Յեկ այստեղ, յեկ այստեղ: Տես, ինչպես են խաղանում կապիկները. քիչ եր մնացել, վոր այս կապիկը ինձ ճանկեր:

Կանբայը ուշադրությամբ դիտում էր կապիկներին և մտածում, թե ամեն մեկը վոր ցեղին է պատկանում: Թեյվուրն էլ ձեռքի փայտով բարկացնում էր նրանց:

Մի մեծ կապիկ յեկավ ու վանդակի ճաղերի առջևում նստեց: Թեյվուրը ինչքան ուզեց նրան իր փայտով բարկացնել նա տեղից չշարժվեց:

Կանբայն ու Իյալքարը, Թեյվուրին մի քանի անգամ գգուշացրին, վոր կապիկին չբարկացնի:

— Դրան մի գրգռիր ձեռքդ կկծի, — ասացին նրանք: Թեյվուրը ուշադրություն չդարձրեց: Յերբ նա մի անգամ էլ ցանկանում է փորձել կապիկին բարկացնել, կապիկը կայծակի պես վեր թռավ տեղից ու յերկու ձեռքով բռնելով Թեյվուրը թեղ ձեռքը կծեց: Թեյվուրը վախից սկսեց գոռալ և լաց լինել: Կանբայը ձեռքին բռնած փայտով խփեց կապիկին, Իյուլքարն էլ բռունցքով մի քանի անգամ հասցրեց նրան: Կապիկը վախեցած բաց թողեց Թեյվուրի ձեռքը:



Թեյվուրի ձեռքի վրա յերևում էր կապիկի ատամների հետքը, նրա ձեռքը շատ էր ցավում: Ընկերները հավաքվեցին նրա մոտ ու հարցրին.

— Ի՞նչ պատեց Թեյվուր, ի՞նչ պատահեց:

Կանբայը ծիծաղելով պատասխանեց.


— Վոչինչ չի պատահել:

Նա իմ կապիկին բարկացրել է, կապիկս էլ նրա հետ կատակ է արել:

Յերեխաները, շարքով կանգնած վանդակները դիտելով առաջ գնացին: Կանբայը կանգ առավ մի փոքրիկ վանդակի առջև: Վանդակում պահված մեծ ու փոքրիկ կրյաններին դիտելուց հետո ասաց.

— Յես մինչև այժմ չեմ հանդիպել, վոր սրանք կրկեսում ցույց արվեն: Յերևում է վոր սրանք չափազանց բթամիտ են, դրա համար էլ դրանց վարժեցնելը դժվար է: Իյուլքարը Կանբայի ուսին խփելով ասաց.

— Դրանց էլ դու կսովորեցնես, ի՞նչ կա վոր ենքան էլ դժվար բան չես:



Իյուլքարը դպրոցում պիտներ կազմակերպութեան գլուխ անցնելուց հետո, կազմակերպութեանը շատ եր կենդանացել: Հանգստի որերին կազմակերպած խաղերն ու զբոսանքները յերեխաներին շատ եր հետաքրքրում, նրանք հարյուր տոկոսով մասնակցում էին այդ խաղերին: Շնորհիվ Իյուլքարի ղեկավարութեան Ասլանի նման յերեխաները չափազանց ուղղվել էին: Նս յերեխաների կրթութեան մասին մեծ հոգս եր տանում, նրանց համար հետաքրքիր գրքեր եր կարգում և ցերեկույթներ եր կազմակերպում:

Կանքայր կենդանիներին շատ եր սիրում: Նա յերբ մտնում եր բնագիտական կարիներ, այնտեղից ժամերով դուրս չեր գալիս, ուշադրութեամբ դիտում եր բոլոր նկարները: Յերբ քաղաքում նոր կենդանիներ էին բերում, կամ կրկեսում վարժեցրած կենդանիներ էին ցուցադրում, Կանքայր հոր հետ գնում եր ու կուշտ դիտում:

Կանքայր շատ անգամ ինքն իրեն հարց եր տալիս, թե այդ խելոք կենդանիներին վճարտեղից են ճարում:

Մի որ նա հայրիկից հարցրեց.

— Հայրիկ, կենդանիներին այդպես լավ պարելը ո՞վ ե սովորեցնում:

Հայրը պատասխանեց.

— Տղան, դու ուսումը ո՞ւմից ես սովորում:

Կանքայր անմիջապես պատասխանեց.

— Ուսուցչից.

Հայրը ժպտաց ու ասաց.

— Նրանց ել սովորեցնողը մի ուսուցիչ ե:

Կանքայն ասաց.

— Յես այդ գիտեմ, բայց այս անլեզու կենդանիներին վո՞նց ե սովորեցնում:

Հայրը պատասխանեց.

— Տղան, կրկեսում ձեռքին փայտիկ բռնած մի մարդ կար, դու տեսար նրան:

— Տեսա:

— Տես ուսուցիչը նա յե: Նա շատ մեծ ուսուցիչ ե: Լավ ուսում առած, տարիներով փորձված մի մարդ ե նա:

Կենդանիների ապրելու կերպը, նրանց բնավորութեանը իր հինգ մատի նման գիտե, կենդանիներին վարժեցնելը նրա համար բոլորովին դժվար չե, վորովհետև ամեն մի կենդանու բնավորութեան հետ ծանոթ ե:

Կանքայր դարձյալ մտածեց. քիչ հետո հանկարծ գլուխը բարձրացնելով ասաց.

— Հայրիկ յերբ յես մեծանամ, կթողնես վոր կենդանիների ուսուցիչ դառնամ:

Հայրը նրա գլուխը շոյելով պատասխանեց.

— Զավակս յերանի թե այդ որը շուտ գար: Յես շատ յերջանիկ կլինյի: Միայն թե կենդանիների ուսուցիչ դառնալու համար, պետք ե սիրել կենդանիներին: Տես, սրանից հետո մեր տան «մարմար» կատվին, մեր հարևանի «կափլան» շանը չխփես:

Կանքայր կարմրեց, վորովհետև խաղալու ժամանակ մեկ-մեկ նրանց խփում եր: Նա հանկարծ վերցրեց հոր ձեռքը համբուրեց ու ասաց.

— Հայրիկ, սրանից հետո վոչ մի անգամ չեմ խփի: Նրանց հետ քաղցր կվարվեմ և բարեկամաբար կխաղամ:

Այդ որվանից սկսած Կանքայն ել ավելի սիրեց կենդանիներին: Կենդանիների ուսուցիչ դառնալը շատ ամուր տեղավորվել եր նրա գլխում: Նա կրկեսում տեսել եր, վոր ուսուցիչը քյամանչայի վրա մի քանի յեղանակներ եր նվազում կենդանիներին պար ածում: Կանքայր մի փոքրիկ քյամանչա գնեց և սկսեց հաճախել կանսերվատորիա ու նվազել սովորել:



Թյուրքյան գյուղում մի մեծ կոլխոզ կար: Այդ կոլխոզում ցանում էին սեխ, ձմերուկ, վարունգ, պամիդոր և դանազան կանաչեղեններ:

Անցյալ տարվանից կոլխոզի բոստաններում բուն էին դրել յերկու կրյաներ: Նրանք ամբողջ ամառն ու աշնանը քեֆ էին քաշել բոստանի կանաչ մարգերում, յերբ ձմեռ պապին յեկավ և ամեն ինչ ծածկվեց սպիտակ սավանով նրանք յերկուսով ել քաշվեցին իրենց բունը և քուն մտան:


Յեկավ գարունը: Արևի վոսկեգոծ ու տաքուկ ճառագայթները ամեն ինչի արյուն և հոգի տվեցին: Արդեն ժամանակն էր, վոր կրյաները իրենց յերկար քնից զարթնեցին:

Մի որ յերկուսն ել քնից զարթնեցին և բացեցին իրենց աչիկները:

Նրանք վաղուց ի վեր սոված էին, արևի փայլուն ճառագայթները և դրսի մետաքսի պես փափուկ խոտերը նրանց հրավեր էին կարդում: Նրանք կամաց-կամաց սողալով բնից դուրս յեկան:

Կոլխոզնիկները քրտնաթոր աշխատում էին: Նրանցից վոմանք հոգն էին վարում, վոմանք սերմ գցում, վոմանք ել բոստանը մարգերի բաժանում:

Կոլխոզնիկները բոլորն ել պլանները կատարելու համար հարվածային կերպով աշխատում էին: Աշխատանքի ընթացքում նրանց գեմքերից ուրախություն և բերկրանք էր հոսում: Արևն ել վերեից իր կենսատու ճառագայթները թափում էր կոլխոզնիկների գլխին. մարգերի չորս կողմում բուսել էին բազմաթիվ կանաչ խոտեր: Կրյաները



յերկուսով մտել էին խոտերի արանքը և սոված գայլի նման ուտում էին:

Կրյաների ցանկացած որը հասել էր: Ոգը որ որի վրա տաքանում էր: Ամբողջ գաշտը կանաչ էր հագել:


Եգ կրյան ավագների մեջ ձուլ յեր ածել: Քանի արևը տաքացնում էր, ձվերի միջում փոքրիկ կրյաներ էին առաջ գալիս: Մի որ ել ձվերը ջարդվեցին և նրանց միջից դուրս յեկան փոքրիկ կրյաներ:

Եգ կրյան բալիկներին հետեր գցած ման էր գալիս բոստանների մեջ:

Նա այժմ մայր էր: Չագուկներին սովորեցնում էր, թե ինչպես պետք է ուտեն, ինչպես պետք է թշնամիներից պաշտպանվեն: Արևը բարձրացել էր իր գեներթում, յերկնքից կրակ էր թափվում: Կոլխոզնիկները հավաքված հովասուն բարդու տակ հանգստանում էին: Ամեն ինչ լուել էր: Կրյաները ման էին գալիս ջրած մարգերի միջև: Արծիվը սավառնում էր յերկնքում: Նա հանկարծ կանգնեց, թե վերը արևածուղի արջերը հառեց գետնին:

59/31-66






Նա վերևից նկատել էր կրյաներին: Արծիվը սկսեց կամաց-կամաց ցած իջնել: Նա մի բոպե կանգ առավ պարզեց թևերը, հետո հանկարծ կայծակի արագությամբ ցած սլացավ, մայր կրյային վերցրեց մագիլների մեջ և սկսեց յերկինք բարձրանալ:

Արծիվը սլացավ դեպի իր բունը, վորը շինված էր անմատչելի ժայռի ծերպին: Նա կանգ առավ մի սրածայր ժայռի գլխավերևում շատ բարձր և այդ բարձրությունից կրյային գցեց ճիշտ ժայռի կատարին ու ինքն էլ նրա յետևից սկսեց ցած իջնել:


Կրյան ընկնելով ժայռի վրա, նրա պատյանը փշուրփշուր յեղավ: Արծիվը վերցրեց մերկ կրյային ու մոտեցավ բնին, վորտեղ փոքրիկ ծագուկները մերկ վզները յերկարած ու բերանները բաց սպասում էին իրենց մորը: Արծիվը հռչակեց, կտոր-կտոր արեց կրյային ու կերցրեց ձագուկներին:

Ամառվա արձակուրդը սկսվել էր: Իյուլքարը պիոնե-րական կազմակերպության հետ միասին ուղարկված էր Թյուրքյան գյուղը: Իյուղի պիոններ կազմակերպությունը շատ էր թույլ: Իյուլքարը նրանց ողնելու համար միջամտում էր կազմակերպության ներքին գործերին: Կազմակերպության ղեկավարներին ծանոթացնում էր աշխատաքի նոր մեթոդների հետ: Նա կարճ ժամանակում վերացրեց յեղած թերությունները, Ասլանին էլ կցեց կոլխոզին, վորպեսզի կուլտուրական աշխատանք տանի:

Պիոններն էր ամեն որ լողանում էին ծովում, ավազների վրա արևի վաննա ընդոնում, Ֆուտբոլ խաղում, մարզանք կատարում և մեկ-մեկ էլ զբոսանք կազմակերպում մոտակա կոլխոզներն ու սովխոզները:



Ասլանի գործը շատ լավ էր: Նա հասել էր, իր նպատակին: Նա մեծ աշխուժով աշխատում էր կոլխոզում: Նա ուսումնասիրում էր բերքի տեսակները, նրանց խնամելու ձևերը, և սովորում էր, թե ինչպես պետք է պարարտացնել հողը: Կամբայը շուտ-շուտ գալիս էր Ասլանի մոտ: Մի որ նա նորից յեկավ Ասլանին տեսության:



Նրանք յերկուսը միասին բոստանը ծայրից-ծայր ման յեկան: Ասլանը կամբային ցույց էր տալիս ձմերուկի մեծ ությամբ պամիդորներու բազմաթիվները և նրանց մասին տեղեկություններ

էր տալիս: Կանբայը ինքն-իրեն մտածում էր.

— Տես է, մենք վոր Ասլանին խայտառակում էինք, վորպես գողի, ինչքան է փոխվել, նա այժմ դարձել է աշխատանքի ու գործի մարդ: Կանբայը այսպես մտածելով ման էր գալիս ձմերուկի ու սեխի մարգերի մեջ, յերբ հանկարծ թաղերի միջում յերկու հոտ կրյայի ձագ նրկատեց: Ուրախությունից չէր իմանում, թե ինչ անի: Նրանց բռնելու համար մտավ թաղերի մեջ:

Կրթաները հենց վոր նկատեցին Կանբային սկսեցին փախչել: Նրանք այժմ անմայր ու անպաշտպան էին: Ամեն ինչ նրանց խրտնեցնում էր: Նրանք արծիվից շատ էին վախեցել: Այն որվանից մինչև այսոր նրանք թաղերի միջում գաղտնի ապրում էին: Կանբայը մոտեցավ նրանց: Նրանք յերկուսն ել գլուխները քաշեցին պատյանի մեջ և մնացին անշարժ: Կանբայը յուրաքանչյուր ձեռքում մի-մի կրյա բռնած մարդից դուրս յեկավ ու Ասլանին դառնալով ասաց.

— Ասլան տես, ինչ եմ գտել:

Ասլանը նայեց ու ծիծաղելով պատասխանեց. — քո ցանկացած բաներն են: Ինչքան ել փոքր են խնձորի մեծությամբ...

Կանբայը Ասլանին ասաց. — «Մնաս բարով Ասլան, դարձյալ կտեսնվենք»: Ու վազելով հեռացավ: Յերբ մեծ ալգու դռնով ներս եր մտնում բացականչեց, — «Տեսեք ինչ եմ բերել»: Յերբխաները հավաքվեցին նրա շուրջը:



— Եղ ի՛նչ է, եղ ի՛նչ է, տուր տեսնենք, ցույց տուր տեսնենք, — բացականչում էին ամեն կողմից:

— Կանբայ, դրան վորտեղից ես գտել հարցրեց մեկը:



— Մարդերում, — պատասխանեց Կամբայը:

Այդ կանչերի վրա Իյուլբարն ել յեկավ ու տեսնելով կրայներին զարմացած ասաց.

— Ա՛հ, ինչքան փոքրիկ են: Փոքրիկ, խնձորի մեծությամբ, այդպիսի փոքրիկ կրյաներ վոչ մի անգամ չէյի տեսել:

Կանբայը ուրախ ուրախ ասաց.

— Իյուլբար դրանց պետք է պահեմ ու մեծացնեմ:

Կրյաները գլուխները պատյանի մեջ քաշած անշարժ կանգնել էին: Յերբխաները ուրախ շրջապատած նորեկ հյուրերին չէյին ուզում նրանց մենակ թողնել:

Կանբայը անմիջապես զնաց ու բերանը շյուղով գործված մի արկղ բերեց, յերկու կրյաներին ել դրեց արկղի մեջ ու բերանը փակեց:

Կանբայը կրյաների վրա շատ եր ուրախացել: Նա յուրաքանչյուր ժամը մի անգամ զնում էր նրանց մոտ: Յանկանում էր նրանց հեա ծանոթանալ, և բարեկամանալ: Բայց կրյաները հենց վոր տեսնում էին Կանբային, վախենում ու կծկվում էին:

Կանբայը շատ եր մտածում: Նա ցանկանում էր կըր-

յաներին վարժեցնել, սովորեցնել նրանց. բայց ի՞նչ սովորեցնել, ի՞նչպես սովորեցնել, վճռեցից սկսել...

Նա այս հարցերին պատասխան գտնել չեր կարողանում: Արկղի մոտ նստած ժամերով մտածում էր: Այդ միտքը նրան հոգնեցրել էր: Յերբ իրիկունները քնելու համար անկողին էր մտնում զանազան պլաններ էր կազմում: Նա լսել էր, վոր կենդանիներին սովորեցնելուց առաջ սոված են պահում: Դրա համար էլ մինչև առավոտ նրանց ուտելու վոչինչ չտվեց:

Լույսը բացվեց: Կանթալը անկողնից վերկենալուն պես կրյաների մոտ վազեց: Սոված ու բանտարկված կրյաները արկղից դուրս գալու համար ճանապարհ էին փնտռում: Յերբ նկատեցին կանթալին անմիջապես յերկուսն էլ գրլուխները թազցրին ու անշարժ կանգնեցին: Կանթալը ձեռքին բռնած խոտը նրանց յերկարեց: Նրանք վախեցած հետ փախան: Կանթալը շատ աշխատեց կերակրել նրանց, բայց նրանք համառորեն ուտելուց հրաժարվեցին: Կանթալը մտածեց այսպես. — Վրաս չունի սոված կմնաք և ստիպված կլինեք ուտելու:

Մի որ կանթալը շատ էր դադարված: Գյուղի ակումբում պիոներների կողմից ցերեկույթ էր տրվելու: Մի կողմից ակումբն էին զարդարում, մյուս կողմից էլ յուրաքանչյուրը իր դերն էր պատրաստում:

Նա ընկերների հետ մինչև ուշ յերեկո աշխատել էր:

Յերբ կանթալը տուն էր վերադառնում, արևը արդեն մայր էր մտնում և ողբ զովացել էր:

Նա մտածում էր կրյաների մասին, դրա համար էլ չեր կարողանում ճամբան ուղիղ գնալ: Ընկերները նրա հետ կատակ էին անում:

— Մինչև դու տեղ հասնես կրյաները սովից կսառկեն:

— Չեմ իմանում, ի՞նչ է ուզում այդ կեղտոտ կրյաներից:

— Յես զգվում եմ նրանց ձեռք տալուց:

— Շատ միք խոսի, նա այդ կրյաներին պետք է սովորեցնի ու կրկեսում պար ածի:

Կանթալը այդ կատակներից մի քանիսին պատասխանում, մի քանիսն էլ առանց պատասխանի յեր թողնում: Տուն հասնելուն պես, անմիջապես գնաց կրյաների մոտ: Սոված կրյաները լիզում էին արկղի բերանը և դուրս գալու համար ճամբա փնտրում:

Հենց վոր կանթալին տեսան յերկուսն էլ գլուխները թագցրին: Կանթալը բաց արեց արկղի բերանը և ձեռքին բռնած խոտը նրանց յերկարեց: Սոված կրյաները խոտի հոտը առնելուն պես գլուխները դուրս հանեցին: Վախվելու սկսեցին ուտել խոտը: Կանթալը ուրախությունից քիչ էր մնացել խելքը կորցնելու: Առաջին քննությունը լավ էր բռնել: Կրյաները նրա ձեռքից խոտ էին ուտում: Ասել է դրանից հետո ինչպես ցանկանար, այնպես էլ կարող էր մեծացնել: Ուրախությունից կուրծքը ուռչում էր, հույսը ավելանում, աչքերը փայլում էին: Կրյաներին կերակրելուց հետո վազելով յեկավ ճաշարան: Ընկերները սեղանների շուրջը նստած ընթրիք էին անում: Ամենից վերև նստել էր Իյուլքարը: Կանթալը դողացող և ուրախ ձայնով բացականչեց.

— Իյուլքար, կրյաներիս ձեռքովս կերակրեցի:

Իյուլքարը այդ խոսքերի իմաստը լավ չհասկացավ, միայն թե գլուխը շարժեց և ասաց.

— Բարով ես յեկել կանթալ. — կանթալը ցանկանում էր Իյուլքարից մի շարք բաներ հարցնել, բայց ընկերների մոտ սիրտ չեր անում: Նստեց իր տեղում ու ընթրիք արեց: Յերեկոյան ակումբ գնացին. Յերեկույթը շատ լավ անցկացավ, կոլխոզնիկներն ու սովխոզի բանվորները շատ գոհ մնացին: Յերեխաների և Իյուլքարի դեմքերը ծիծաղում էին: Գիշերը ուշ վերադարձան: Կանթալը բոլորից շուտ անկողին էր մտել և առավոտը բոլորից շուտ վեր կացել: Նա կրյաների համար թարմ խոտ ու տերև քաղեց:

Նրանց կուշտ կերակրեց: Յերբ կրթաները նրա ձեռքից քաշում եյին խոտը և ուտում, նա շատ եր ուրախանում:

Կանքայր կրթաներին սովորեցնելու համար պլան եր ուզում կազմել: Դրա համար ել նստած մտածում եր: Նա այնքան եր տարված այդ մտածմունքներով, վոր չնկատեց, թե ինչպես Իյուլքարը յեկավ ու կանգնեց իր գլխավերևում: Կանքայր ընկղմել եր մտքերի ծովում, Իյուլքարը ծիծաղելով հարցրեց.

— Ի՞նչ ես մտածում Կանքայ:

Կանքայը յերբ գլուխը բարձրացրեց ու տեսավ Իյուլքարին տեղիցը վեր ցատկեց: Իյուլքարը դարձյալ հարցրեց.

— Գրթաներիդ խոտ տվել էս. Կանքայը հպարտ տոնով պատասխանեց.



— Այո տվել եմ, յերկուսին ել ափիս մեջն եմ կերակրել:

— Այդպես ե հարկավոր, վոչ մի անգամ առաջները խոտ մի գցի, թող սովորեն ձեռքիցդ ուտել: Մեկ ել նրանց կամաց-կամաց ձայնի, աղմուկի վարժեցրու: Այդ դեպքում շուտ կսովորեն:

Կանքայը հույսով փայլող աչքերը հառեց դեպի Իյուլքարը և ասաց.

— Իյուլքար, յես դրանց վճնց սովորեցնեմ, վո՞րտեղից սկսեմ: Այս գործը ինձ շատ ե մտածել տալիս:

Իյուլքարը ծիծաղեց ու հարցրեց.

— Դու նրանց ի՞նչ ես ուզում սովորեցնել:

Կանքայը անմիջապես պատասխանեց.

— Պարել:

— Պարել: Շատ լավ... խոտ ուտելը վճնց սովորեցրիք, այդպես ել պարելը սովորեցրու:

Փորձը քեզ ցույց ե տալու: Ամեն բանում համբերող և դիմացող յեղիք: Նարիմանովի անվան գրադարանից քեզ համար 3-4 գրքեր եմ բերելու հատկապես

կրթաների մասին դրված: Կարդա՛, նրանց բնավորութունները լավ ուսումնասիրիր: Այդ գործում գրքերը քեզ շատ կօգնեն:

Կանքայը շարունակում եր վարժեցնել կրթաներին: Նա կրթաներին կերակրում եր վորոշված ժամերին և կերակրելու համար բաց եր թողնում բակը: Նա կերակրում եր դիտելու համար հավաքված յերեխաների աղմուկի տակ: Սոված կրթաների համար արկղից դուրս գալը մեծ տոն եր: Կանքայը մի փունջ տերև կախ եր տալիս ոգից: Նա տերևները այնպես եր կախում, վոր կրթաները առանց պլուխները վեր բարձրացնելու, կամ առանց յետևի վոտքերի վրա կանգնելու չեյին կարող ուտել: Վերջը վերցնում եր քյամանչան ու սկսում նվագել: Քյամանչայի ձայնը կրթաների համար մի բարի համբավ եր, վորովհետև ուտելու ժամն եր իմացնում: Սառան Կանքայի ոգնականք եր դարձել. նա մեկ մեկ կախված խոտը դպցնում եր կրթաների փոքրիկ սև շրթերին: Յերբ կրթաները պատրաստվում եյին ուտել խոտը, Սառան խոտը կամաց-կամաց վերև եր քաշում: Այդպիսով ցանկանում եյին կրթաներին սովորեցնել խոտը կանգնած ուտելը:

Համառ կրթաները այդ բանը չեյին ցանկանում:

Կանքայը շատ աշխատեց հնար չեղավ: Նա շարունակեց փորձը: Իյուլքարը նրան ասել եր, — «Ամեն ինչում հավերժող ու դիմացկուն յեղիր», — Կանքայը այդ խոսքերը չեր մոռացել: Նա շատ աշխատեց վերջ ի վերջո կրթաներին սովորեցրեց վոտքի վրա կանգնած խոտ ուտելը:

Ամեն որ կերի ժամանակ նրանց դուրս եր բերում բակը, քյամանչան վերցնում եր ձեռքը և սկսում նվագել: Սառան ել խոտը բռնում եր կրթաների գլխավերևում, կրթաները կանգնում եյին յետևի վոտքերի վրա և ուտում խոտը:

Կանքայը յերկու ամսում հազիվ այդ քանը կարողացավ սովորեցնել կրթաներին: Բայց նրա մտադրութունը բոլորովին այլ եր: Նա ինքն իր վրա նայում եր վորպես ուսուցչի, նա ցանկանում եր, վոր յերբ ինքը քյամանչան նվագի կրթաները նրա հանած ձայների համեմատ պարեն:

Կանքայր մի որ դարձյալ շատ եր զբաղված: Քաղաքից պիտոներական մի խումբ եր յեկել: Կազմակերպութեան ղեկավարի ընդարձակ զեկուցումն եր զըված: Զեկուցումը լսելուց հետո բոլորը միասին շրջել եյին ամբողջ գյուղը, վերջն ել գնացել եյին ծովափ: Ճաշից հետո Լենինյան անկյունում քաղաքական գրքեր եյին կարդացել ու վերլուծել: Կանքայր յերեկոյան դեմ հազիվ եր վերադարձել տուն: Կրթյաները ամբողջ որը սոված եյին մնացել: Կանքայր տուն հասնելուն պես, անմիջապես զընաց կրթյաների մոտ: Սոված կրթյաները, յերը տեսան Կանքային գլուխները արկղի բերնից դուրս հանեցին և ըսկսեցին յետևի վոտների վրա կանգնած դես ու դեն շարժվել: Կանքայր գլխի ընկավ, վոր նրանք իրենց այդ վարմունքով ասում եյին, — «Դուք բաց արա, մեզ կերակուր տուր».— Կանքայր վերցրեց արկղը և դուրս գնաց: Սառան դեռ չեր յեկել: Բաց արեց արկղի բերանը և կրթյաներին դուրս թողեց, վերցրեց քյամանչան և ըսկսեց նվագել: Կրթյաները, յերը լսեցին ճաշի ժամանակը ավետող քյամանչայի ձայնը վոտքի վրա կանգնեցին ու սկսեցին ոգում կեր փնտրել: Կանքայր տեսնելով այդ, ուրախութեամբ տեղից վեր ցատկեց, քյամանչան ձեռքին դեպի սենյակ վագեց ու սկսեց կանչել:

— Իյուլքար, Իյուլքար այստեղ յեկեք, ձեզ բան եմ ցույց տալու, — Իյուլքարն ու մյուս յերեխաները նրա յետևից թափվեցին բակը, Կանքայր սկսեց նվագել: Կրթյաները քյամանչայի ձայնը լսելուց պես յերկուսն ել վոտքի կանգնեցին և կողք-կողքի սկսեցին հրապարակում ման գալ: Յերեխաները ծիծաղից թուլանում եյին, Իյուլքարն ել եր ծիծաղում, Կանքայր ուրախութեամբ ինչ անելը չեր իմանում: Նա վոտքի կանգնեց, թելով կապված մի փունջ խոտ Սուլեյմանին տալով ասաց. — «Սուլեյման առ այս խոտը ողից կախիր, քանի նրանք մոտենան դու տեղի փոխիր:» Կանքայր նվագում եր, Սուլեյմանը նվագի ուրիշ համաձայն փոխում եր իր տեղը, կրթյաները կանգնած իրենց յետևի վոտքերի վրա վագվը:

դում եյին Սուլեյմանի յետևից, այսպիսով ստացվում եր մի գվարձալի տեսարան:

Սմառվա արձակուրդները վերջացան: Կանքայր պիտոներին հետ վերադարձավ քաղաք: Արձակուրդը նրան շատ բան եր տվել: Մարմինը ամրացել, միտքը զարգացել, փորձն ու գիտելիքները շատացել եյին: Նա ամեն որ հաճախում եր դպրոց, յերաժշտութեան դասի և աշխատում եր պիտոներական կազմակերպութեան մեջ:

Կրթյաներին ել չեր մոռանում: Գալիս եր տուն հանգիստ ձաշում, ձաշը վերջացնելուց հետո զբաղվում եր կրթյաներով: Ամեն որ կրթյաներին արկղից դուրս եր բերում, ինքը սկսում եր նվագել, իսկ յեղբայրը Սուրխայն ել, նվագի ձայնի համաձայն խոտը ձեռքին ման եր գալիս: Նա կրթյաներին յերեք չորս յեղանակ եր սովորեցրել: Մի քանի անգամ փոքրիկ կոնցերտներ եր կազմակերպել: Փորձը շատ հաջող եր անցել: Կրթյաները Կանքայի աչքում բարձրացել, մեծ արժեք եյին ստացել: Նրանք այլևս հասարակ, վայրի կրթյաներ չեյին այլ վարժված, վորոշ դպրոց անկացած կենդանիներ եյին: Նրանց կարելի յեր դուրս բերել հասարակութեան առջև, մեծ յերեկույթներում, կոնցերտներում ցույցի հանել: Կրթյաների նման կենդանիներին յերեք—չորս պար սովորեցնելը հասարակ բան չեր: Դրանից հետո բոլորը նրա կրթյաներին և իրեն ել պետք ե ձանաչեյին, բոլորը պետք ե հիանային նրա վարպետութեան վրա: Նրա անունը պետք ե գրվեր լրագրերում, ամենքը պետք ե խոսեյին Կանքայի մասին:

Կանքայր ավարտեց յոթնամյա դպրոցը: Շրջանավարտների պատվին մեծ յերեկույթ եր կազմակերպված: Դպրոցականները խումբ խումբ գալիս հավաքվում եյին դպրոցի միջանցքում: Մի մեծ խումբ հավաքվել եր զանիճի առջև: Յերեխաները դռան վրա կախած ծրագիրը կարդալուց հետո սկսեցին իրարից հարցնել:

— Վճրտեղ են այդ պարոզ կրթյաները:

— Ո՞վ ե տեսել, վոր կրթյաները պարեն:

— Մի ասեք ո՞վ է այդ Կանբայը:

— Կրյաները նրանն են:

Քանի գնում դռան առջև բազմությունը շատանում էր: Բոլորը անհամբեր սպասում էին յերեկույթի սկսվելուն:

Խփեց առաջին զանգը: Հանդիսականները դահլիճ լըցվեցին: Բոլորի աչքերը ուղղված էին դեպի բեմը: Աշակերտները անընդհատ ծափահարում էին վարպետի վարագույրը շուտ բացվի, վոտքերը գեանին խփում և ազմուկ-աղաղակ էին բարձրացնում:


Վարագույրը բացվեց: Առաջին անգամ դուրս յեկան աշակերտները, յերգեցին, նվագեցին, արտասանեցին և զանազան մարզանքներ կատարեցին: Վարագույրը յերկրորդ անգամ բացվելիս բոլորը անհամբեր սպասում էին կրյաներին, ծափ էին տալիս ու գոչում «Թո՛ղ կրյաները գան, կրյաները»: Յերեկույթի յերկրորդ մասը նվագով սկսվեց, զանազան պարեր պարեցին:

Վերջապես Կանբայը ձեռքում բռնած իր սիրելի քյամանչան բեմ դուրս յեկավ նրան դիմավորեցին յերձաբատեմ ծափահարություններով, յերբ նա նստեց աթոռի վրա ու սկսեց նվագել կրյաները իրար յետևից վազվրգելով բեմ դուրս յեկան: Նրանք յետևի վոտքերի վրա կանգնած պարում էին:

Հանդիսականները, բոլորը ծափ էին տալիս ու ծիծաղից թուլանում: Կրյաները շարունակում էին իրենց պարը:

Կանբայը յեղանակը փոխեց, կրյաներն ել անմիջապես փոխեցին իրենց պարը: Հանդիսականները հիացմունքից քարացել էին: Քյամանչան լռեց, կրյաներն ել դադարեցին պարելուց: Կանբայը վերջրեց կրյաներին ու հեռացավ բեմից: Յերկարատև ծափահարությունները անվերջ շարունակվում էին: Կանբայը ստիպված յեկրորդ անգամ կրյաներին բեմ դուրս բերեց: Բոլորը ցանկանում էին մի անգամ ել տեսնել կրյաներին: Այս անգամ Կամբայի հետ դպրոցի վարիչն ել բեմ դուրս յե-

կավ: Մի կերպ լռեցրեց հանդիսականներին և ասաց հետևյալը: «Ընկերներ ձեզ հիացմունք պատճառող այս կրյաները պատկանում են մեր դպրոցը ավարտող Կանբայ Դուրսուն Չաղեյին: Այս ընդունակ փոքրիկ դասատուն կենդանիները չափազանց սիրող նրանց կենցաղն ուսմնասիրող, հավերհասար դիմացկուն յեմ ածխասասեր մի յերեխա յե: Նրան ձեզ մոտ շատ չեմ գուշելու: Յու-



րաքանչյուր ուսուցչի ձեռնահասությունը կարելի յե իմանալ նրա աշակերտների միջոցով: Պարող կրյաները ձեզ ցույց տվին, թե նա ինչպիսի ուսուցիչ է: Նա ցանկանում է շարունակել իր գործը և դառնալ կենդանիների դաստիարակ: Նրա այդ մտադրությունը սրտանց ծափահարում և խոստանում ենք ամեն կերպ աջակցել նրան: Դուք մի որ պետք է լսեք, վոր մեր քաղաքը մի մեծ կրկես է յեկել: Դուք իրարից հարցնելու յեք, թե արդյոք ո՞վ է այդ կրկեսի դաստիարակը, թերթերում հայ-

տարարութիւնները կարգացած ձեր ընկերները ձեզ ա-  
սելու յեն. «Կանքայն ե պարող կրթաների ուսուցիչը»  
Գնալու յեք կրկես և այնտեղ տեսնելու յեք Կանքայի  
խակական արժանիքները: Մեր դպրոցի բնագիտական կա-  
բինետը այս յերեք գրքերը, վորպես նվեր ընծայում ե  
Կանքային“:

Ամբողջ դահլիճը մի մարդու պես ծափահարում եր  
նրան և խնդրում, վոր միանգամ ել պար ածի կրթանե-  
րին: Կանքայը նորից սկսեց նվագել, կրթաները առաջվա-  
նից ել ավելի մեծ վարպետութամբ սկսեցին պարել:  
Յերեսխաները անվերջ ծափահարում եյին վոտքերով հա-  
տակը դոփում:

Քյամանչան լուեց. կրթաները կանգ առան: Կանքայը  
աղմուկ-աղաղակի մեջ հանդիսականներին գլուխ եր տա-  
լիս: Հանկարծ յերաժշտախումբը սկսեց նվագել: Յերե-  
խաներից մեկը կանչեց.

— Նվագիր կրթաների յեղանակը...

Նվագախումբը սկսեց նվագել կրթաներին ծանոթ յե-  
ղանակներից մեկը: Կրթաները սկզբում խրտնեցի, մի  
քանի վայրկյան ականջ դրեցին, վերջը կանգնեցին վոտքե-  
րի վրա և սկսեցին անուշ-անուշ պարել: Դահլիճը նո-  
րից վոգեվորվեց, հանդիսականները ծիծաղից թուլացան:  
Դպրոցական ընկերներից մի քանիսը ի պատիվ Կանքայի  
բացականչեցին.

Կեցցեն պարող կրթաները:

Կեցցե Կանքայը:

Ասլանը տեղից վեր կենալով բացականչեց.

Կեցցե մեր սիրելի առաջնորդ Իյուլբարը:



Istehsalata verilmiş 13/II-36  
Cəpə imzalanmış 7/V-36  
Bir cəpə listində getmiş hərufat 3104  
Baş Mətbuat Müdirliyi Məvəkkilliyi №539  
Cəpə listi 2. Kağız formatı 62×94<sup>1</sup>/<sub>16</sub>  
Azərənəşr № 33  
Tiraz 1000. Sifariş № 133

Azərənəşr mətbəəsində basıldı, 26-lar adına „Kitab Sarajı“,  
Bakı, Əli Bəyramov küçəsi.

«Azərbaycan qrafiyanı»



NL0409227

90 qəp.

4314

13743

1  
1

807

ABDULLA ŞAIQ

# OJUNCU BAQALAR

AZƏRNƏŞR

Tədris-Pedaqoji Şöbəsi

Bakı—1936